ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐ ՀԿ
ARMENIAN FORESTS NGO
«Հայաստանի անտառներ» բնապահպանական հկ
ք. Երևան, Արաբկիր 41 փող., տուն 3/2, հեռ. 0037491 436809, էլ. փոստ. armenianforests@gmail.com

24.01.2022թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն՝ Հ Սիմիդյանին

Հարգելի պարոն Նախարար,

Դիմում եմ Ձեզ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի՝ Արփա գետից ջրառի թույլտվության հայտի կապակցությամբ: Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՇՄ նախարարությունը երկու անգամ մերժել է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի՝ Արփա գետից ջրառի թույլտվության հայտերը: Այժմ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն վիճարկում է ՇՄ նախարարության մերժման վարչական ակտերը դատարանում: Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանի վարույթում են գտնվում՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի հայցը ընդդեմ ՇՄ նախարարության՝ Արփա գետից 1.284595 մլն. մ3/տարի, 3568.32 մ3/օր, 41.3 լ/վ ջրածավալով ջրառ իրականացնելու համար ջրօգտագործման թույլտվություն տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտ՝ համաձայն «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված ջրօգտագործման հայտի, ընդունելուն պարտավորեցնելու, 22.03.2021թ. թիվ 86-Ա հրամանը և 30.04.2021թ. թիվ 146-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին /վարչ. գործ հ. ՎԴ/5338/05/21/ և Արփա գետից ջրօգտագործման թույլտվություն տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու և միաժամանակ 17.06.2019թ. թիվ 181-Ա հրամանը և 17.06.2019թ. թիվ 181-Ա հրամանի բողոքարկման արդյունքում ընդունված՝ 02.09.2019թ. թիվ 292-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին /վարչ. գործ հ.ՎԴ/9342/05/19/:

Այս պարագայում ՇՄ նախարարությունը իրավասու չէ վարչական վարույթ իրականացնել՝ լսումներ անցկացնել և քննարկել հայտը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն. «1. Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ դ) դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ.»

Այսպիսով, նույն կողմերի՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի և ՇՄ նախարարության միջև նույն առարկայի վերաբերյալ կան երկու դատական գործ ՀՀ վարչական դատարանի վարույթում: Հետևաբար, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի ՝ Արփա գետից ջրառի թույլտվություն ստանալու հայտի վերաբերյալ վարչական վարույթը պետք է կարճվի:

Ելնելով վերը նշվածից, խնդրում եմ՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի՝ Արփա գետից ջրառի թույլտվություն ստանալու հայտի վերաբերյալ վարչական վարույթը կարճել:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,
«Հայաստանի անտառներ» բնապահպանական հկ-ի տնօրեն,
ՇՄ նախարարության հանրային
խորհրդի անդամ՝ Նազելի Վարդանյան